Թիվ 15343042 կատարողական վարույթով գնային առաջարկ

2026-11-27 17:27:32

Հայտատու	Հարկադիր կատարումն ապահովող ծառայություն
Տեսակ	Աճուրդների մասին հրապարակային ծանուցումներ
Հիմք	«Կատարողական վարույթի մասին» ՀՀ օրենքի 77 հոդվածի 4-րդ մաս

Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության դատարանի կողմից 16 սեպտեմբերի 2026 թ. տրված թիվ ԱՐԴ/0366/02/26 կատարողական թերթի հիման վրա Հարկադիր կատարումն ապահովող ծառայության (այսուհետ՝ Ծառայություն) Արմավիրի մարզային բաժնում հարուցվել է թիվ 15343042 կատարողական վարույթը։
Կատարողական վարույթով պետք է Անահիտ Վանիկի Դավթյանից, Նելլի Արայի Հարությունյանից և Նորա Սուրենի Սարգսյանից համապարտության կարգով հօգուտ «Արեգակ ՈՒՎԿ» ՓԲ ընկերության բռնագանձել 4.577.601,30 ՀՀ դրամ, 137.328 ՀՀ դրամ՝ որպես նախապես վճարված պետական տուրք, հաշվեգրվող տոկոսներ, ինչպես նաև սահմանված կատարողական ծախս։
Կատարողական վարույթի շրջանակում արգելադրվել է պարտապան Նորա Սուրենի Սարգսյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող ՀՀ Արմավիրի մարզ, գյուղ Երասխահուն, Մեծ Ակադեմիական թաղամաս, 8-րդ փողոց 25 շենք, 8 բնակարանը /կադաստրային վկայականի համար թիվ 09012018-04-0034/, որը ենթակա է հարկադիր իրացման։

Տեղեկացնում ենք, որ
«Կատարողական վարույթի մասին» օրենքի 77 հոդվածի 4-րդ մասի համաձայն՝
4. Անշարժ գույքի շուկայական արժեքը որոշելու նպատակով հարկադիր կատարողը նշանակում է փորձագետ, եթե՝
(...)
2) այդ մասին մինչև գույքի հարկադիր իրացման որոշում կայացնելը միջնորդել է կատարողական վարույթի մասնակիցը՝ պայմանով, որ փորձաքննությունը կկատարվի միջնորդություն ներկայացրած անձի հաշվին, և եթե վերջինս անհրաժեշտ ծախսերի՝ գումարը հարկադիր կատարողի նշած չափով նախապես վճարում է Ծառայության համապատասխան դեպոզիտ հաշվին։
Որպես տվյալ գույքի սեփականատեր տեղեկացնում ենք Ձեզ, որ սույն ծանուցումը հանձնվելու հաջորդ օրվանից 2 շաբաթվա ընթացքում իրավունք ունեք միջնորդություն ներկայացնել հարկադիր կատարողին՝ գույքի շուկայական արժեքը

պարզելու նպատակով փորձաքննություն նշանակելու համար, պայմանով, որ փորձաքննությունը կկատարվի միջնորդություն ներկայացրած անձի հաշվին, և եթե անհրաժեշտ ծախսերի գումարը հարկադիր կատարողի նշած չափով նախապես վճարեք Ծառայության Արմավիրի մարզային բաժնի թիվ 900333829019 դեպոզիտ հաշվին։
Միջնորդության բացակայության պարագայում, գույքը հարկադիր աճուրդի է ներկայացվելու կադաստրային արժեքի՝ 2.795.799 ՀՀ դրամի 80%-ի չափով, որը կազմում է 2.236.639 ՀՀ դրամ։

15343042.pdf

37460713514

armavir@harkadir.am

ԱՋԱՓՆՅԱԿ ՀԱԼԱԲՅԱՆ Փ. 41Ա